ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հունիսի 2025 թվականի N 595-Ա

ՄԱՐԵՏԱ ԳՐԱՎԻՉԻ ՇԱՀԲԱԶՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆԱԺ (ՕԳՆԱԿԱՆ) ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի 14–րդ ենթակետով, հիմք ընդունելով Մարետա Գրավիչի Շահբազյանի 2025 թվականի մայիսի 30-ի դիմումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 03-ի N 21 արձանագրությունը.

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի Խաղաղության 1 փողոցի 7 տան հասցեի բնակիչ Մարետա Գրավիչի Շահբազյանի (ծնված՝ 01.11.1962թ., նույնականացման քարտ՝ 016207391, տրված 28.06.2024թ.–ին 057–ի կողմից) նկատմամբ սահմանել պատրոնաժ (օգնական)՝ պատրոն նշանակելով իր որդուն՝ Ժորժիկ Բագրատի Շահբազյանին (ծնված 16. 08.1989թ.,անձնագիր՝ AU0251870, տրված 04.05.2021թ.–ին 057–ի կողմից):
2. Ժորժիկ Բագրատի Շահբազյանին վերապահել ի շահ իր մոր՝ Մարետա Գրավիչի Շահբազյանի, առանց հատուկ լիազորագրի, կնքել անհրաժեշտ գործարքներ, հանդես գալ նրա իրավունքների ու շահերի պաշտպանությամբ՝ ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ հարաբերություններում՝ ներառյալ դատարանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հունիսի 05
Արաքս համայնք